Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

24431

05 JAN 2010

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ՑԵՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ՊԼԱՆ

(ԳՈՐԾԱՐՏԵՂԿՈՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Միության անդամների մասսայական–քաղաքական և կենցաղային սպասարկման ճիշտ կազմակերպումը յենթադրում է իմանալ նրանց կազմը: Այս նպատակով անդամատոմսերի փոխանակման հետ միասին կատարվում է միության անդամների, իսկ մի-քանի միություններում՝ միությունների կոմ–ների ցուցմունքով՝ նաև վոչ պրոֆանդամների վերացուցակագրում:

Վերացուցակագրման յենթակա յեն բոլոր նրանք, վոր աշխատում են ձեռնարկություններում— բանվորները, ՃՏ աշխատողները, ծառայողները և կրտսեր սպասարկու անձնակազմը, ինչպես չափահասներ, այնպես ել աշակերտներ (ֆաբզործուսների, բրիգադայիններ և այլն):

Վերացուցակագրման յենթակա չեն արտադրական պրակտիկա անցնող ուսանողները, վորոնք անդամատոմս են ստանում իրենց պրոֆկոմներում:

ՎԵՐԱՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ՑԵՎ ՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Վերացուցակագրման և տոմսերի փոխանակման աշխատանքը ձեռնարկություններում դրվում է գործարտեղկոմի վրա: Այդ աշխատանքն անմիջապես կատարելու համար առանձնացվում է հատուկ բրիգադ:

2. Բրիգադի կազմի մեջ մտնում են գործարտեղկոմի անդամները՝ կազմսեկտորի, վիճֆինսեկտորի կազմակերպիչները, դանձապահը, կոմյերիտմիության ներկայացուցիչը, գործարանային վարչության աշխեկոնոմիկայի բաժնի ներկայացուցիչը և այլն:

3. Աշխատանքը ցեխերում (հերթերում) կազմակերպելու համար ստեղծվում են բրիգադներ, համաձայն հերթերի թվի, վորը հաստատում է ցեխկոմը և վորոնք աշխատում են համագործարանային բրիգադի և ցեխկոմի ղեկավարությամբ:

Ծանոթություն.— Վոչ–մեծ ձեռնարկություններում, գործարտեղկոմների հայեցողությամբ, ցեխային բրիգադներ կարող են չստեղծվել, և ամբողջ աշխատանքը կատարում է գործարտեղկոմի բրիգադը:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄԻԿՅԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

25 FEB 2013 24431

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

4. Միության անդամների լայն խավերին վերացուցակագրման խնդիրները բացատրելու նպատակով, անհրաժեշտ է աշխատանքն սկսելուց առնվազն յերկու շաբաթ առաջ բոլոր ցեխերում և պրոֆխմբակներում զրույցներ անցկացնել վերացուցակագրման նշանակության մասին: Ցեխերում պետք է փակցնել համապատասխան պլակատներ և լոզունգներ, ինչպես նաև լայնորեն օգտագործել գործարանային բազմատիրաժ թերթերը, պատի թերթեր և ռադիոն՝ բացատրական աշխատանքի համար:

5. Մասսայական բացատրական աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել 100 տոկոսով միության մեջ ներգրավելու բոլոր նրանց, վորոնք իրավունք ունեն միության մեջ մտնել, և տոմսերի փոխանակումն սկսելուց առնվազն 3 օր առաջ նրանց ընդունելությունը ձևակերպել ցեխկոմիտեների նիստերում և ընդհանուր ժողովներում:

6. Դրա հետ միաժամանակ աշխատանք է տարվում վերացնելու անդամավճարների պարտքերը:

7. Նախապատրաստական աշխատանքի սկզբին համագործարանային բյուրոն կազմակերպիչների նախագահների ու դեկավարների, ցեխկոմների գանձապահների ու ինֆորմատորների հրահանգչական խորհրդակցություն է գումարում՝ նրանց բացատրելու համար վերացուցակագրման և տոմսերի փոխանակման խնդիրներն ու գործնական միջոցառումները:

8. Նույնպիսի խորհրդակցություններ են գումարվում նաև խմբկազմակերպիչների հետ համագործարանային մասշտաբով, ըստ ցեխերի, հերթերի և խմբերի, խմբկազմակերպիչներին 100 %-ով հրահանգավորելու նպատակով:

ՑՈՒՑԱԿԱԳՐՈՂՆԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՏԱԼԸ

9. Գործարանեղկոմի բյուրոն ցեխային բյուրոյականների հետ միասին պետք է նախօրոք նշի յուրաքանչյուր ցեխում հարկավոր ցուցակագրողների ճիշտ թիվը, հաշվելով մեկ ցուցակագրողին մոտ 35–40 վերացուցակագրվող:

Ծանոթություն.— Նկատի ունենալով ցուցակագրողների հնարավոր պակասումը վերացուցակագրման պահին (հիվանդության և այլ պատճառներով), անհրաժեշտ է նրանց ընդհանուր թվի մոտ 10 տոկոսի չափով պահեստի ցուցակագրողներ ապահովել:

331.8.. К-89 1008/34392

10. Ցուցակագրողներ պետք է վերցնել լիովին գրագետ բանվորներից ու ծառայողներից և աշխատանքը կատարել կամավոր, հասարակական բեռնավորման կարգով: Ցանկալի յե վերացուցակագրման համար օգտագործել գործարանային վարչության և ցեխերի վիճակագիրներին, անընդհատ արտադրական ուսուցում անցնող ուսանողներին, ֆաբգործուսների և ձեռնարկության կից գոյություն ունեցող այլ ուսումնարանների աշակերտներին:

11. Նախօրոք, մինչև վերացուցակագրումը, բոլոր ցուցակագրողները պետք է հրահանգներ ստանան: Հրահանգները տալիս է անմիջապես գործարանեղկոմի բյուրոն, ինչպես նաև վերադաս միութենական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Ծանոթություն.— Խոշոր ձեռնարկություններում գումարվում են ցուցակագրողների միքանի հրահանգչական ժողովներ ըստ հերթերի կամ ցեխերի:

12. Ցուցակագրողներին հրահանգներ տալ, նշանակում է՝

ա) մանրամասն ծանոթացնել վերացուցակագրման խնդիրների հետ.

բ) քննել անկետաները և մանրամասն բացատրել նրա բոլոր հարցերը, նրա լրացման մասին հրահանգներ տալով.

գ) ծանոթացնել վերացուցակագրման և տոմսերի փոխանակման տեխնիկային:

Ծանոթություն.— Հրահանգներ չստացած ընկերներին չի թույլատրվում վերացուցակագրում անցկացնել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Անդամատոմսերի փոխանակման և միության անդամների վերացուցակագրման ամբողջ աշխատանքը կատարվում է վաղօրոք սահմանված ճիշտ պլանով: Պլանը այնպես պետք է կազմել, վոր 5000 և ավելի բանվորներ ունեցող խոշոր ձեռնարկություններում աշխատանքը (չհաշված նախապատրաստումը, վորի մասին խոսվեց վերևում) տևի մոտավորապես 12 օր, 1—5 հազար բանվոր ունեցող ձեռնարկություններում՝ մոտ 10 օր, 100-ից մինչև 1000 բանվոր ունեցող ձեռնարկություններում՝ 8 օր:

14. Վերացուցակագրման և տոմսերի փոխանակման ժամկետներն առանձին ցեխերում պետք է համապատասխանեն աշխատավարձի վճարման և անդամավճարների գանձման ժամկետներին, այնպիսի հաշվով, վոր հաշվառման քարտերի բաժանումը ցուցակագրողներին, չխանգարի ժամանակին հավաքելու անդամավճարները:

15· Համագործարանային բրիգադ կազմակերպելուց անմիջապես հետո հարկավոր է ցեխային բրիգադների ղեկավարությամբ ձեռնարկել ստուգելու միության անդամների հաշվառման քարտերի կատալոգը:

Անհրաժեշտ է ուշի ուշով ստուգել հավաքարարներին տրված հաշվառման քարտերը և հանել ձեռնարկությունից դուրս յեկած պրոֆանդամների հաշվառման քարտերը, իսկ մեկ պրոֆխմբից մյուսն անդամների քարտերը փոխադրել համապատասխան հավաքարարի գործում:

16· Միաժամանակ ցեխային բրիգադները, միության մեջ ընդունվելու դիմումների կամ արձանագրությունների հիման վրա, յուրաքանչյուր պրոֆխմբի համար կազմում են այն նոր պրոֆանդամների ցուցակներ, վորոնք դեռևս անդամատոմս չեն ստացել և հաշվառման քարտեր չունեն: Այս ցուցակներն ստուգում է համագործարանային բրիգադը:

17· Այնտեղ, ուր միաժամանակ կատարվում է վոչ պրոֆանդամների վերացուցակագրում, ցեխկոմները պետք է ըստ խմբերի (բրիգադների) կազմեն վոչ-պրոֆանդամների ցուցակներ, այն ստուգելով ցեխային վարչության նյութերով:

18· Յուրաքանչյուր ցեխկոմի տրվում են գործարկոմի կողմից ստորագրված և նրա կնիքով վավերացված նոր անդամատոմսեր, անյքան քանակությամբ, վոր ճիշտ համապատասխանի հաշվառման քարտեր ունեցողների և այն անձանց թվին, վորոնք մտել են նոր պրոֆանդամների ցուցակում. տրվում են նաև վերացուցակագրման անկետաներ:

Ծանոթություն.— Ցեխկոմը տոմսերը տալիս և առանց լրացնելու: Լրացվում են տոմսերը պրոֆանդամներին տալու ժամանակ:

19· Անդամատոմսերը ցեխկոմը տալիս է, ստորագրությամբ հատուկ տեղեկագրով, վորը կազմվում է հետևյալ ձևով.

Գործարկոմի տեղեկագիր նոր անդամատոմսեր տալու մասին

Ցեխի անունը	Տրված նոր անդամատոմսերի թվերի վերջին	Ցեխ-ի նոր անդամների (լրացնել և ստորագրել)	Ստացած դրամագլուխ	Փոխադրված անդամների թվերի վերջին	Ցեխում գտնվող անդամների թվերի վերջին	Վերադարձ ցեխերից	Անդամատոմսերի փոխանակման համար տրված անդամատոմսերի թվերի վերջին	Վերացուցակագրված անդամների թվերի վերջին
1	2	3	4	5	6	7	8	9
4								

Այն ձեռնարկություններում, ուր վերացուցակագրվել են նաև վոչ-պրոֆանդամները, պետք է տեղեկություններ տրվեն նաև վերացուցակագրման յենթակա և վերացուցակագրված վոչ-պրոֆանդամների թվի մասին:

Տեղեկագրերը լրացվում են յերկու օրինակով, վորից մեկը մնում է գործարտեղկոմում, իսկ յերկրորդը, ամբողջ աշխատանքը վերջացնելուց հետո, ուղարկվում է միության մարզկոմին, կամ ԿԿ-ին (այն գործարտեղկոմների դեպքում, վորոնք անմիջապես կապված են ԿԿ-ի հետ), վորպես մսխված անդամատոմսերի արդարացուցիչ փաստաթուղթ:

Ծանոթություն.— Անդամատոմսերը տալիս ցեխկոմը լրացնում է տեղեկագրի 1—4 սյունակները. 5—9 սյունակները լրացվում են աշխատանքը վերջացնելուց հետո, յերբ տեղկոմը հաշվետվություն և ներկայացնում կատարված աշխատանքի մասին:

20· Ցեխային բրիգադները պետք է ժամանակին չենք պատրաստեն, վորտեղ կատարվելու յե վերացուցակագրման և տոմսերի փոխանակման աշխատանքը, պատրաստեն սեղան, աթոռներ, թանաք և այլն:

21· Աշխատանքն սկսելուց առնվազն յերեք որ առաջ ցեխում պետք է հայտարարություն փակցնել ճիշտ ցույց տալով, թե յուրաքանչյուր խմբում յե՞րբ և վորտե՞ղ է կատարվելու վերացուցակագրման և տոմսերի փոխանակման աշխատանքը:

Ծանոթություն.— Վերացուցակագրումը և անդամատոմսերի փոխանակումը կատարվում է բացառապես աշխատանքի ժամերից դուրս (նախքան աշխատանքը և աշխատանքից հետո, իսկ ուր հնարավոր է՝ ճաշի դադարի ժամանակ):

22· Տոմսերի փոխանակում կատարելու վայրում պետք է կազմակերպել պարտք մնացած անդամավճարների ընդունելություն:

23· Անդամատոմսերի փոխանակման կարգը և անկետան լրացնելու ցուցմունքները տրված են հատուկ հրահանգում, վորը պետք է բաժանել ցեխկոմի անդամներին (իսկ այնտեղ, ուր աշխատանքը կատարում է անմիջապես գործարտեղկոմը, գործարտեղկոմի անդամներին), վորոնք կատարում են անդամատոմսերի փոխանակումը:

24· Ամբողջ աշխատանքը վերջացնելուց և բոլոր ցեխկոմներից նյութերն ստանալուց հետո, գործարանային բրիգադը հաշվում է պրոֆանդամների բոլոր անկետաները, ստուգում է տրված ան-

դամատոմսերի թվի ու յեղած հաշվառման քարտերի հետ և կազմում է յեղրափակիչ հաշվեմատյան վերացուցակագրման ու տոմսերի փոխանակման մասին, վերևում ցույց տրված կարգով (տես կ. 19)։

25. Միության մարզկոմին կամ ԿԿ-ին հատուկ կամ պատվիրված նամակով ուղարկվում է անդամատոմսեր տալու գործարանային տեղեկագրի ստուգված որինակը, իսկ բոլոր անկետաները (ստուգելուց հետո, թե բոլորի վրա գրված է արդյոք միության և ձեռնարկության անունը) պատվիրված փաթեթով ուղարկվում են միության մարզային (յերկրային, հանրապետական) կոմիտեներին, իսկ ուր այդպիսիք չկան, անմիջապես համապատասխան պրոֆխորհրդին։ Այնտեղ, ուր վերացուցակագրված են նաև վոչ-պրոֆանդամները, նրանց անկետաները կցվում են առանձին։

26. Վերացուցակագրում չանցկացած պրոֆանդամների հաշվառման քարտերը հանվում են ընդհանուր կատալոգից և պահվում են առանձին, մինչև վոր այդ պրոֆանդամները ներկայանան վերացուցակագրվելու և տոմսերը փոխելու գործարկոմում, ընթացիկ աշխատանքի կարգով։ Նրանց անկետաները նույնպես ուղարկվում են պրոֆխորհուրդ, իսկ միության մարզկոմին կամ ԿԿ-ին տասն որը մեկ անդամ տեղեկություններ են տրվում լրացուցիչ կերպով վերացուցակագրված և անդամատոմսերը փոխած պրոֆանդամների մասին։

27. Զոգտագործված անդամատոմսերը մնում են գործարտեղկոմի տրամադրության տակ, վորպեսզի նա այն ոգտագործի միության անդամներ հավաքագրելու ընթացիկ աշխատանքի ընթացքում, նրանց գործածման մասին հաշվետվություն ներկայացնելով, համաձայն համապատասխան մարզկոմի կամ ԿԿ-ի ցուցումների։

Մանրություն.—Զոգտագործված անկետաները վերադարձվում են այն միութենական որգանին, վորը ավել և այդ անկետաները։

ՄԵՆԱԿ ՊՐՈՖԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳՈՎ.

28. Մենակ պրոֆանդամների (խոսքն այն պրոֆանդամների մասին է, վորոնք աշխատում են այլ ձեռնարկություններում և հիմնարկություններում և ամրացված են ավյալ ատորին պրոֆկազմակերպությանը՝ պրոֆսպասարկման ու անդամավճարները

տալու համար) անդամատոմսերի փոխանակումը կատարվում է հետևյալ կերպ։

ա) տոմսերի փոխանակումն ու վերացուցակագրումը կատարվում է գործարտեղկոմում, կոմսոմոլ ակտիվի կողմից, վորը նախորդ պետք է ձևք բերի համապատասխան քանակությամբ անդամատոմսեր և անկետաներ։

Յեթե մենակները այն միության անդամ են, վորին պատկանում է ավյալ գործարտեղկոմը, ապա անդամատոմսերը լրացվում են գործարտեղկոմում յեղած տոմսերի թվից։

բ) Իսկ յեթե ավյալ կոմսոմերպությանն ամրացված են ուրիշ միությունների մենակ պրոֆանդամները, ապա գործարտեղկոմը վերացուցակագրումն սկսելուց վոչ ուշ, քան յերկու շաբաթ առաջ պարզում է, թե վո՞ւրքան ուրիշ միությունների անդամներ են ամրացված իրեն (յուրաքանչյուր միությանը առանձին) և համապատասխան հայտ է ներկայացնում մարզային պրոֆխորհրդին՝ յուրաքանչյուր միության համապատասխան քանակությամբ տոմսեր ստանալու համար։ Ուրիշ միությունների մենակ պրոֆանդամները վերացուցակագրման յենթակա չեն։

29. Հաշվառման քարտի և հին անդամատոմսերի հիման վրա գործարտեղկոմը նոր տոմս է լրացնում և ստորագրությամբ տալիս է միության անդամին։ Անդամատոմսերը տրվում են հետևյալ ձևի ցուցակով։

Ձեռնարկության անունը . . . . . .
Այն միությունը, վորին պատկանում է ձեռնարկությունը .
Ձեռնարկության վայրը . . . . . .

Անդամատոմսի թիվը	Ազգանունը, անունը, հայրանունը	Ամսաթիվ, ամսվա և տարվա	Տարիքը	Տոմսի տեսակը	Ստորագրություն

Ցուցակը կազմվում է յերկու որինակից, վորից մեկը ոգտագործված անդամատոմսերի հետ միասին ուղարկվում է շրջանային (մարզային) պրոֆխորհրդին, իսկ մյուսը մնում է գործարտեղկոմում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0205227

2336.

30. Անդամատոմսերի փոխանակման պահին չաշխատող (ընտանեկան հանգամանքների բերմամբ, սեղոնը վերջացած լինելու պատճառով և այլն) և տվյալ ստորին պրոֆկազմակերպության հաշվառման մեջ գտնվող պրոֆանդամների անդամատոմսերի փոխանակումը կատարվում է այն կարգով, ինչ մենակ պրոֆանդամներին, միայն այն տարբերությամբ, որ այս պրոֆանդամները վերացուցակագրման ենթակա չեն: Մխության մարզային (յերկրային, հանրապետական) կոմիտեի հաշվառման մեջ գտնվող ու չաշխատող պրոֆանդամներն իրենց անդամատոմսերը փոխում են այն կազմակերպություններում, որտեղ նրանք հաշվառման մեջ են գտնվում:

331.88
Ա-89

Սրբագրողներ՝ Դաբ. Հակոբյան, Հովհ. Հակոբյան

Հայ պոլիգրաֆի տպարան

Գրավիտ № 8901 Պատվեր № 2756 Տիրաժ 800

Հանձնված է արտադրության 25 Օգոստոսի 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 1 սեպտեմբերի 1932 թ. Ստ. Ֆ. Ա.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. Публ. Библиотека
ՀՍԽՀ — СССР
им. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ